CONCOURS D'ENTREE 2023-2024/ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹ 2023-2024

ARMENIEN / ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

19/06/2023

Temps imparti / Ժամանակը: 150 minutes / 150 րոպե
Les dictionnaires ne sont pas autorisés. / Բառարանների գործածումն արգելվում է:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Բոլոր առաջադրանքները կատարել տրամադրված հարցարանների համապատասխան բաժիններում՝ առանց ավելորդ անգամ արտագրելու:

Առաջադրանք 1. (11 միավոր)
1.1. առաջադրանքը գնահատվում է 9 միավոր: Յուրաքանչյուր սխալ կետադրման համար հանվում է 0,25 միավոր, յուրաքանչյուր սխալ ուղղագրության համար՝ 0,5 միավոր:
1.2. և 1.3. առաջադրանքների ճիշտ պատասխանները գնահատվում են 1-ական միավոր:
Առաջադրանք 2. (7 միավոր)
2.1. առաջադրանքի համար տրվում է 3 միավոր. յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,5 միավոր:
2.2. առաջադրանքի համար տրվում է 4 միավոր. յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,5 միավոր:
Առաջադրանք 3. (8 միավոր)
3.1., 3.2. առաջադրանքների համար տրվում է 3-ական միավոր. յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,5 միավոր:
3.3. առաջադրանքը գնահատվում է 2 միավոր. յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 1 միավոր:
Առաջադրանք 4. (8 միավոր)
4.1., 4,2 առաջադրանքները գնահատվում են 2-ական միավոր. յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,5 միավոր:
4.3. առաջադրանքը գնահատվում է 4 միավոր. յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,5 միավոր:
Առաջադրանք 5. (6 միավոր)
5.1. և 5.2. առաջադրանքների համար տրվում է 2-ական միավոր. յուրաքանչյուր ամբողջական ճիշտ պատասխան գնահատվում է 1 միավոր:
5.3. և 5.4. առաջադրանքների ճիշտ պատասխանները գնահատվում են 1-ական միավոր:

Յուրաքանչյուր հարակից սխալի համար հանվում է 0,25 միավոր:

Առաջադրանք 1 (11 միավոր)

1.1 Անհրաժեշտության դեպքում լրացնել տառերը և կետադրել բնագիրը (9 միավոր):

Ամառ էր՝ հնձի ժամանակ:

Արևի վաղորդյան շողերի հետ մենք հասանք գետափի սահմանամերձ արտերը: Սարերից իջնող սյուքը մեղմորեն օրորում էր արտերը, իսկ գետի միալար խշշոցն ու ծղրիդների անընդմեջ ձայնը ներդաշնակ էին մեր բացօթյա աշխատանքային եռուզեռին, և հոգնություն չէինք զգում: Չիմացանք՝ երբ գետի հանդիպակաց բարձունքին ծվարած գյուղի փոշեպատ ճանապարհով իջան թուրք հնձվորն ու իր ընտանիքը: Նրանց արտը ուղիղ մեր դիմացն էր՝ սահմանի այն կողմը: Ակամայից հետաքրքրվում ես, երբ դիմացդ մի ուրիշ աշխարհ է, և մարդիկ ուրիշ են՝ թե՛ այդչափ մոտիկ և թե՛ շատ հեռու: Նրանք անխոնջ արտն էին հնձում, իսկ փոքրը՝ հազիվ երեք-չորս տարեկան, անվրդով իր խաղով էր տարված: Քամին գետի խշշոցի հետ մերթընդմերթ բերում էր կցկտուր ու անըմբռնելի բառեր:

Միջօրեին հացի նստեցինք սաղարթախիտ ծառի տարածուն ստվերում: Որոշ ժամանակ հետո փոքրիկը լացակումած դիմեց հորը՝ ձեռքով մեր կողմը ցույց տալով: Հայրս, որ քիչ-քիչ հասկանում էր թուրքերեն, ասաց, որ երեխան մեր հացից է ուզում: Ես, ափիս լավաշի մի մեծ պատառ, ինքնաբերաբար ձեռքս այն կողմ կարկառեցի: Փոքրիկն ասես այդ էր ակնկալում. իսկույն ևեթ վեր ցատկեց տեղից ու վազեց դեպի մեր կողմը՝ լայն ժպտալով ու ծափ տալով:

1.2. Նշել այն շարքը, որի բաղադրյալ հատուկ անունների բոլոր բաղադրիչները գրվում են մեծատառով (1 միավոր):

1) ՆՈՐ ԶԵՅԹՈՒՆ, ԱՌՅՈՒԾԱՁԵՎ ՄՀԵՐ, ԼԵՈՆԱՐԴՈ ԴԱ ՎԻՆՉԻ, ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ
2) ԿԻԼԻԿԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, ԳԱԳԻԿ ԱՐԾՐՈՒՆԻ, ՆՈՐ ԳԵՂԻ, ՏԵՐ ՀՈՎՆԱՆ
3) ՎԱՀԱԳՆ ՎԻՇԱՊԱՔԱՂ, ՓՈՔՐ ՀԱՅՔ, ՍԻՄՈՆ Ա ԵՐԵՎԱՆՑԻ, ԱՐԱՐԱՏՅԱՆ ԴԱՇՏ
4) ՆԵՐՄԵՍ ՄԵԾ, ԻՍՊԱՆԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, ՓՈՔՐ ՀԱՅՔ, ՀԻՆ ՀՈՒՆԱՍՏԱՆ

1.3. Նշել այն տողը, որի բոլոր բառերի բոլոր բաղադրիչները գրվում են առանձին (1 միավոր):

1) վաղ (դեռահասություն), կոթող (հուշարձան), մինչև (անգամ), մեկ (երրորդ), տեր (հայր)

2) ոչ (առևտրային) կազմակերպություն, դեմ (դիմաց), քիթ (քթի), լույս (ընծայել), ի (դերև) ելնել

3) քայլ (առ) քայլ, ձեռք (բերում), վառ (դեղին,) օր (ու) արև, Նոր (Գեղի)

4) հօդս (ցնդել), խելք (խելքի), Էրեբունի (Երևան), չնայած (որ), լույս (ընծայել)

2.1. Տրված շարքերից մեկական նախածանց, արմատ և վերջածանց ընտրելով (յուրաքանչյուր բաղադրիչ գործածել մեկ անգամ)՝ *կազմել վեց համածանցավոր բառ (3 միավոր):*

Ամենա	հոգեառ	ական	ամենաատելի
բաղ(ա)	կնատյաց	ույթ	բաղաձայնույթ
արտ	համատեղել	ելի	արտառոց
ան	դրվածք	ոց	անտեղի
հար	պտղաբեր	անք	հարաբերական
շար	ձայնային	ի	շարադրանք

2.2. *Ընդգծել այն բառերը, որոնցում <u>ստոր</u> հնչյունախումբն ածանց է (4 միավոր):*

Ստորակարգ, ստորև, ստորագիր, ստորամիտ, ստորոգյալ, ստորերկրյա, ստորոգի, ստորություն, ստորաղասում, ստորացնել, ստորգետնյա, ստորոտ, ստորջրյա, ստորաբաժանում, ստորին, ստորացուցիչ:

Առաջադրանք 3 (8 միավոր)

3.1. Ընտրել և գրել հոմանիշների վեց զույգ (3 միավոր):

Այպանել, ամբաստանել, երկրպագել, մտրակել, ծեքծեքել, ձոնել, պաշտել, մեղադրել, պչրել, հանդիմանել, խարազանել, ներբողել:

այպանել - հանդիմանել
ներբողել- ձոնել
երկրպագել - պաշտել
ամբաստանել - մեղադրել
մտրակել - խարազանել
ծեքծեքել - պչրել

3.2. Ընտրել և գրել հականիշների վեց զույգ (3 միավոր):

Մշտնջենական, մեղավոր, քնքուշ, անպատկառ, մարմնեղ, ուշիմ, ժամանակավոր, վտիտ, թանձրամիտ, պարկեշտ, բիրտ, չքմեղ:

մշտնջենական - ժամանակավոր
մեղավոր - չքմեղ
քնքուշ - բիրտ
անպատկառ - պարկեշտ
մարմնեղ - վտիտ
ուշիմ - թանձրամիտ

3.3. Գտնել երկու շարք, որոնցում դարձվածքների իմաստների սխալ բացատրություն կա (2 միավոր):

ա) նեղն ընկնել- նեղվել, յուղ կապել- գիրանալ, *շունչ քաշել- ոգևորել*

բ) ոտքերն ամպոտ- անմեղ, մտքի թելը կտրել – ընդմիջել, ճամփա ընկնել- ուղևորվել

գ) ձեռք բերել- նվաճել, հօդս ցնդել- չքանալ, պատիվ անել- բարեհաճել

դ) հետ քաշվել- ընկրկել, *ճակատի քրտինքով- անկեղծորեն,* ջրի պես-սահուն

ե) վրա ընկնել-հարձակվել, ոտքերը թուլանալ-ընկճվել , սիրտը շարժել-հուզել

զ) հայացքը փախցնել- խուսանավել, կրակի կտոր-չար, սիրտ տալ-օգնել[1]

Առաջադրանք 4 (8 միավոր)

4.1. Ընդգծել նախադասության մտքին համապատասխանող բառը (2 միավոր):

ա) Դրամատունը (գործառնություն, գործունեություն) է կատարում արտարժույթով:

բ) Կնոջ ձեռքին կար մի բացովի (հովար, հովիար), որով նա և՛ հով էր անում, և՛ քշում էր ճանճերին:

գ) Հոր և մորեղբոր դավաճանությունից (վրդովել, վրդովվել) էր երիտասարդը:

դ) Սմբատ Բագրատունու (անօրինակ, անօրինական) արարքը զարմացրել էր կրկեսում հավաքված բազմությանը:

[1] Ցանկացած երկու ճիշտ շարք նշելու դեպքում առաջադրանքը գնահատվում է երկու միավոր:

4.2. Փակագծերում տրված բառերը տեղադրել նախադասությունների մեջ՝ դրանք ենթարկելով համապատասխան փոփոխությունների (2 միավոր):

Իմ կարծիքով՝ ով գեղարվեստասեր է, բնավ իրավունք չունի Լևոնին չճանաչելու, քանի որ նա էությամբ ճշմարիտ արվեստագետ է:

(ճանաչել, ունենալ, էություն, ես)

4.3. Ընտրել և ընդգծել ճիշտ տարբերակները (4 միավոր):

Հանձինս քրոջ, հասկացրեցի, երգող չէ, ի հեճուկս ծնողներից, փախի՛ր, առանց հայրենիք, ի օգուտ ընկերոջ, միջակետներ, սառչել է, խոսեցնել, իրիկնապահներ, ինչի՞ համար, կամքից անկախ, խմբերգեր, ստուգայցեր, քո մոտով:

Առաջադրանք 5 (6 միավոր)

5.1.Նշել այն նախադասությունները, որոնցում խնդրառության սխալ կա, և ուղղել սխալները (2 միավոր):

ա) Մի երեկո անմոռանալի բախտ ունեցա վերջապես նրան տեսնելու ու հետը խոսելու:

բ) Ամեն անգամ՝ դաշնամուրի մոտ նստելիս, երաժիշտը մեղմ հայացքով նայում էր նկարին ~~վրա~~ ու սկսում էր նվագել:

գ) Նա դողդոջուն ձեռքերով վայրկենապես կառչեց ծառի ճյուղին ու սկսեց բարձրաձայն օգնություն կանչել:

դ) Ի տարբերություն խաղի շատ մասնակիցներից՝ նրանք չխուսափեցին դժվարություններից և պայքարեցին մինչև ցանկալի հաղթանակին հասնելը:

5.2.Նշել այն նախադասությունները, որոնցում համաձայնության սխալ կա, և ուղղել սխալները (2 միավոր):

ա) Ակնհայտ է, որ Հակոբ Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկանները» երգիծական ստեղծագործություն ~~են~~ է՝ միշտ արդիական հարցադրումներով:

բ) Հաղթանակից հետո զորքն ու ժողովուրդը ցնծում էին՝ իրենց երախտագիտությունը հայտնելով քաջարի զորավարին:

գ) Թեև դասերն ավարտվել էին, ուսանողների մեծ մասը մնացին՝ նորաբաց գրադարանում գրքերը տեղավորելու:

դ) Այդ գիտնականից՝ որպես առաջադեմ մտածողից, գործընկերների սպասելիքները շատ էին:

5.3. Նշել պարզ նախադասությունը բարդ ստորադասականի փոխակերպելու ճիշտ տարբերակը (1 միավոր):

Վերադառնալով հայրենիք՝ հայոց արքան ձեռնամուխ է լինում կիսավեր երկրի վերակառուցմանը:

ա) Երբ վերադառնում է հայրենիք, հայոց արքան ձեռնամուխ է լինում կիսավեր երկրի վերակառուցմանը:

բ) Երբ հայոց արքան վերադառնում է հայրենիք, ձեռնամուխ է լինում կիսավեր երկրի վերակառուցմանը:

գ) Երբ ձեռնամուխ է լինում կիսավեր երկրի վերակառուցմանը, հայոց արքան վերադառնում է հայրենիք:

դ) Հենց որ վերադառնում է հայրենիք, հայոց արքան ձեռնամուխ է լինում կիսավեր երկրի վերակառուցմանը:

5.4. Նշել ուղղակի խոսքն անուղղակիի փոխակերպելու ճիշտ տարբերակը (1 միավոր):

Քեզ նայելով՝ մտածում էր. «Իսկ դու ի՞նչ կանեիր, եթե իմ տեղը լինեիր, և այնպես, ինչպես ինձ հետ են վարվել, քեզ հետ վարվեին»:

ա) Քեզ նայելով՝ մտածում էր, թե ինքը ինչ կաներ, եթե նրա տեղը լիներ, և այնպես, ինչպես նրա հետ են վարվել, իր հետ վարվեին:

բ) Քեզ նայելով՝ մտածում էր, թե նա ինչ կաներ, եթե իր տեղը լիներ, և այնպես, ինչպես իր հետ են վարվել, նրա հետ վարվեին:

գ) Քեզ նայելով՝ մտածում էր, թե ինքը ինչ կաներ, եթե նրա տեղը լիներ, և այնպես, ինչպես իր հետ են վարվել, նրա հետ վարվեին:

դ) Քեզ նայելով՝ մտածում էր, թե նա ինչ կաներ, եթե նրա տեղը լիներ, և այնպես, ինչպես իր հետ են վարվել, նրա հետ վարվեին: